

Գիրքը բաղկացած է՝ յառաջարանը a-g, նախարանը՝ III—XLVIII, Առաջին բաժինը 1—752 և Նրկորդը՝ 1—128 մեծագիր երեսներին: Գիրքը զարգարուած է Յ. Այվազովըսկու շորս ինքնուրոյն պատկերներով, Վ. Սուրէնեանի ծաղկանկարներով, Հեղինակներին ինքնաձեռագիր ընդօրինակութիւններով և 160 պատկերներով տեսարաններով, Անդրկովկասի, Տաճկական Հայաստանի և այլ տեղեաց տիպերով:

Ի միջի այլոց պատկերներին մէջ գետեղուած են Վեհափառ Տ. Տ. Մկրտիչ Ա. Կաթուղիկոս Ամենայն Հայոց (երկու), Տ. Գեորգ Գ., Տ. Մատթէոս Պատրիարք Իզմիրեան (երկու): Տ. Խորէն Արքեպիսկոպոս Նարեկ, Հ. Ղ. Ալիշան, Հ. Այտրեան, Վեհ. Հայրիկի ընտրող ժողովի պատգամաւորներ, Մ. Լուսու—Մելիքեան, Յ. Լազարեան, Ա. Տ. Ղուկասեան, Բ. Շեղովիկով, Յ. Ալիսաղով, Յովհ. Այվազովսկի, Մ. Էմին. Բ. Պատկանեան, Ռ. Պատկանեան, Գ. Բանանեան, Պ. Ադամեան և այլք:

Գինն է՝ հասարակ թղթի վերայ 4 ու իսկ լաւի վերայ՝ 5 ու:

Պահեստը զանուում է Մոսկուայում Կարբանիկովի գրալաճառանոցում: (Մոսկովայեա):



ՄԵՐ ԵՐԿՐԻ ԳՐԱԿԱՆ ԼԵՋՈՒԹՅՈՒՆ ԽՆԳԻՐԸ.

(Շարունակութիւն ևս վերջ) *



Երկու գրական լեզուի էական տարբերութիւնը որ այժմ վերացնել անհնարին է անշուշտ բայերի խոնարհման մէջ է և սահմ. ներկայ և անցեալ անկատար ուսում եւ և կուսեւ, ուսում էի և կուսի ձեւերի և անոնց բացասականների մէջ, Այս տարբերութիւնը մենք էական ենք կոչում, զի մինչդեռ միւս տարբերութիւնները մեծ մասամբ հընչեւեական են, այս՝ արամաբանական մտածողութեան եղանակի տարբերութիւն է և կուսեւ ձեւն արեւելեան հայերի համար միայն ապառնի է իսկ կուսի միայն պայմանական մինչդեռ արեւմտեան հայերի համար՝ նոյն ձեւերը թէ ապառնի ու պայանական են և թէ սահմ. ներկ. և անց. անկ.:

Ուրիշ խօսքով արեւելեան լեզուն արեւմտեանի մի երկիմաստ ձեւի զիմաց՝ ամեն մի իմաստի համար առանձին ձեւ ունի, ներկան և ապառնին, անց. անկ. և պայմանական ձեւերը կատարելապէս անջատած է իրարուց, իսկ արեւմտեան լեզուի մէջ այդ անջատումը չկայ, ո՞նչ ասել կուզէ որ մտածութեան եղանակը փոխել տալը զիւրին չէ. ուստի և այս կէտի մէջ որքան և միութիւն ցանկանանք, այժմ այդ անհնարին կը լինի զլուխ բերել:

Բայերի խոնարհման մէջ եղած այս էական տարբերութիւնը, որ կայ երկու գրական լեզուի մէջ, հետեանք է իսկապէս արեւելեան գրական լեզուի սկիզբը գնողների գործունէութեան. զի այն որ այժմ անհնարին ենք համարում անել, 1850-ական թուականներին, ոչ միայն հնարաւոր էր այլ և ամենայն հեշտութեամբ կարելի էր, Երեւակայեցէք մի բոլոր, որ այդ ժամանակներում գրական լեզուն առաջ բերելու համար գրագէտները, ինչպէս Նալբանդեանի նամակներից և ուրիշներից երևում է, դեռ խորհում էին թէ որ բարբառը հիմք ընդունեն գրական լեզուի համար, Մշու, Ասորիսանի, թէ Արարատեան բարբառը, Գերակշռութիւնը, հարկաւ ոչ առանց ուրիշ ազդեցիկ հանգամանքների ևս, արեւում է Արարատեան բարբառին, որին մտն են Թիֆլիսի, Ասորիսանի և Վարաբաղի բարբառները, Բայց եթէ այդ մարգիկը, որոնց մենք պարտական ենք մեր արեւելեան գրական լեզուի և գրականութեան սկզբնաւորութիւնը, աւելի լուրջ ուսումնասիրութեան ենթարկելին այդ խնդիրը և յատկապէս գրական լեզուի միութիւնն ի նկատի ունենային, նրանք բայերի խոնարհման մէջ գերակշռութիւն կըտային կը ձեւին և ոչ ուր ձեւին, Մենք չենք գատապարտում այդ միշտ յիշելի մարդկանց, այլ միայն իրողութիւնն ենք քննութեան առնում. անշուշտ կային պատճառներ, որ նրանք այդպէս վարուեցան:

Եթէ մեր բարբառներին ուշադրութիւն գարձենք, կը տեսնենք, որ հայ ժողովրդի մեծ մասի մէջ ոչ թէ ուր ձեւն է գործածական այլ կը ձեւը, Բոլոր արեւմտեան հայերը կը ձեւով են մտածում և խօսում, ինչպէս և Ռուսիայի սահմաններում եղած հայերից Ալեքսանդրապոլի, Ապարանի և ուրիշ կողմերի, արեւմտաքից գաղթած հայերը, ինչպէս և Նոր-Նախիջևանի ու Խրիմի հայերը. իսկ ուր ձեւով մտածում և խօսում են, եթէ կարելի է այսպէս ասել, ծայրագոյն արեւելքի հայերը՝ Ասորիսանի, Ազլարի, Թիֆլիսի, Վարաբաղի և, որ գլխաւորն է, Այրարատի հայերը, ինչպէս և այս վերջին երկրից և Սիւնեաց կողմերից դէպի Պարսկաստան բռնի կամ կամաւոր գաղթած հայերը, Բուն պարսկահայոց բարբառներն ևս, ինչպէս Խոյի և Սալմաստի հայերինը, որոնց գաղթականները 1829 թուից ի վեր տարածուած են Ռուսահայաստանում:

տանի զանազան կողմերը, ում ձևը չունին, թէպէտ և արևմտեան բարբառի երկու ժամանակի զիմաց դարձեալ չորս ժամանակ ունին. այդ բարբառների կազմութիւնը առանձին կերպով է այդ ժամանակների մէջ. ինչպէս՝ ուտել եմ (զրար. յուտիլ եմ, ուտում եմ), ուտելիմ էր (ուտում էի), կամ ուտիս եմ, ուտիս իմ էր, շահանալի է այս վերջին ձևով խօսող հայերի համար ուտում եմ, ուտում էի ձևը դարձեալ խորթ է. և շատ դժուարութեամբ են այդ հայերը վարժուում ում ձևին:

Մենք գծեցինք իր և ում ձևով բարբառների ընդհանուր սահմանագիծը. միայն անշուշտ երկրորդական տարբերութիւնները շատ են, և ի դուր չէ սասած ամեն զիւղ իւր բարբառն ունի. ինչպէս օրինակ տեսնում ենք Վ. Պոլսի բարբառի մէջ կուտեմ կոր, կուտէի կոր ձևը, որով լեզուն ձգտում է ներկան և անց. անկատարն ապառնի և պայմ. ժամանակներից տարբերել, Բայց այդ՝ մեր խնդրից դուրս է: Մեզ հետաքրքրողն այստեղ այն է, որ իր ձևն աւելի տարածուած ենք գտնում:

Մենք կարծում ենք ում ձևն համեմատապէս աւելի նոր ժամանակի տարածուած է երևում և հաւանօրէն հիւսիսային-արևելեան հայերի մէջ նախ սկսած է գործածութեան առնուիլ և հետզհետէ տարածուած է դէպի արևմուտք: Բայց կանգ է առել այն քաղաքական սահմանի ընդհանուր գծի վրայ, որ զանազան դարում Հայաստանն արևելեան և արևմտեան մասի է բաժանած, վերջին Արշակունիների օրերից սկսած, պարսից և բիւզանդացոց, օսմանցոց ու պարսից և ապա օսմանցոց և ռուսաց տիրապետութեան ժամանակ. էլ չենք ասում աւելի հին ժամանակներում: Այդ քաղաքական սահմանագիծը հարկաւ միշտ փոփոխուած է, բայց մօտաւորապէս ձգուած է եղել Մեծ Հայաստանի միջով, Մասիս սարի վրայով, հիւսիսից դէպի հարաւ: Ում ձևն այդ քաղաքական սահմանից չի կարողացել դէպի արևմուտք անցնել, ինչպէս և արևելեան Հայաստանում դէպի Երասխ գետից հարաւ, թէպէտ և այս վերջին կողմերում ևս ներկան և անց. անկատարը ապառնի և պայմանական ժամանակներից որոշելու կարիքը զգացուել է, բայց լեզուն ուրիշ միջոցի է դիմել, ինչպէս և նոյն կարիքը Վ. Պոլսում ստեղծել է կուտեմ կոր ձևը, Միւս կողմից, ինչպէս երևում է, իր ձևը ոչ միայն աւելի հին է, այլ և գրաբառի ձևերին անմիջապէս այդ ձևն է փոխանակել և մի ժամանակ տարածուած է երևում և արևելեան հայերի մէջ, Այդ բանին ապացոյց է ոչ միայն այն, որ արևելեան հայերի մէջ ևս կուտեմ և կուտէի ձևը կայ ապառնի և պայմանականի համար, այլ և նոյն իսկ մինչև այժմ, Ժողովրդական լեզուի մէջ, շատ հանելուկներ, առածներ ու ասացուածներ, որոնց լեզուն դժուար է փոփոխութեան ենթարկուում, իր ձևով

են. բայց որ զխաւտոն է, հեքաթների և այլ զբոյցների մէջ, պատմական ներկայի համար յաճախ անխտիր գործ է ասուում ում ձևի հետ և իր ձևը, թէ արարատեան և թէ միւս բարբառների մէջ. օրինակ պատմում են. «Կընի չընի, մին մարդ կընի. էդ մարդը կուեննայ երկու տղայ, Մեծ տղան կը գնայ» և ըն.:

Կը ձևը ոչ միայն այսպէս հին և աւելի տարածուած է, այլ և այդ ձևն իրրև «գրական» լեզուի ձև, կարծում ենք, ընդունուած է եղել մի ժամանակ և արևելեան հայերի մէջ, նոյն իսկ մեր աշխարհաբար գրականութիւնից շատ առաջ. զի մեր աշխարհաբար գրական լեզուն ինչքան էլ նոր համարենք, անոր սկիզբը շատ հին է. կան աշխարհաբար լեզուով գրուածքներ, այս դարու սկիզբներից կամ անցեալ դարուց, որոնք արևելեան Հայաստանում են գրուած, բայց ոչ ում, այլ իր ձևով: Մինչև վերջին ժամանակները, երբ ում ձևի գրականութեան և դպրոցների ազդեցութիւնը դեռ չկար, շատ դրութիւնների մէջ իր ձևն ընդունուած կը գտնենք. նոյն իսկ մինչև այժմ գուցէ գտնուին հին քահանաներ, որոնց վրայ դպրոցն ու գրականութիւնը չեն ազգած և որոնք իր ձևով են գրում իրենց նամակները, Այս հանգամանքների հետ պետք չէ մոռանալ և այն, որ արևելեան հայոց գրական լեզուից առաջ գոյութիւն ունէր արևմտեան հայոց մէջ իր ձևով աշխարհաբար լեզուն, իրրև մամուլի և նոյն իսկ գրականութեան լեզու, որը առանց ուշադրութեան պետք չէ թողնէին արևելեան հայերի համար գրական լեզու ստեղծողները, բայց մեր դժբախտութիւնն է եղած, որ արևմտեան գրական լեզուն մի մեծ երկով և ազդեցիկ հեղինակի ձեռքով չէ սկսուել, որի ձայնը մինչև արևելեան հայերին հասնէր, բացի այդ արևմտեան գրական լեզուն երկու ծայրայեղ հակումների մէջ է եղել այդ ժամանակ, մի կողմից գրաբարի անչափ ազդեցութեան տակ է գտնուած, միւս կողմից վերին աստիճանի գաւառարան կամ բարբառային է եղած իր բառերով, Բայց այս վերջին երկու հանգամանքը չէ արգարացնում անշուշտ արևելեան գրականութեան հիմնագիտներին, որ առանց ուշադրութեան թողին հայոց լեզուի միութիւնը, և այդքան տարածուած և արդէն աշխարհաբար գրականութեան մէջ մտած և իւր լեզուական — պատմական իրաւունքն ունեցող իր ձևի փոխանակ մի նոր ում ձևով գրական լեզու ստեղծեցին, որով և երկու գրական լեզու առաջ եկաւ: Այն որ մի 35 40 տարի առաջ ամենայն հեշտութեամբ հընարաւոր էր, այժմ արդէն դժուարութիւնների և անհարմարների կարգի մէջ է համարուում, քանի որ ում ձևով լեզուի և գրականութեան ազդեցութիւնն այժմ այնքան մեծ է, որ Առաւելայի հայերից իր ձևով բարբառախօսներն ևս ում ձևին են ենթարկուում:

Այժմ՝ երբ լեզուի միութեան խնդիրն է առաջ դադար, ուր և կը ձևերից որը պէտք է ընտրել, Երկու ձևն ևս հաւատարմացնող գրականութեան և մամուլի մէջ դործածական են, եթէ կը ձևը բարրապահներ մէջ աւելի տարածուած է, ուր ձևն ևս ուրիշներն հետ և այն առաւելութիւնն ունի, որ ներկան և ապառնին անց. անկատարն ու պայմանականը առանձին առանձին ձևերով է որոշում, ճշտութեան մի ձգտում, որ ունի մեր հայերէն լեզուն թէ արեւելքում և թէ հարաւում, և թէ նոյր իսկ արեւմտքում, Առ այժմ մենք այդ ձևերի միութիւնն անհնարին ենք համարում. մինչև մի առանձին քաղաքական փոփոխութիւն չլինի, այդ ձևերից ոչ մէկը և ոչ միւսն իշխող չէ կարող դառնալ, Այդ ի նկատի ունենալով է, որ մենք այժմ երկու լեզուի միացման մասին չենք մտածում, այլ թէ պէտք է և կարելի է երկու լեզուն իրար այնչափ մօտեցնել, որ երկու կողմից ևս հեշտ հասկանալի լինի, Թէ ինչ ձևերի մէջ կարելի է այդ մերձեցումը գլուխ բերել, այդ մասին կը լինի և մեր յօդուածի շարունակութիւնը, որ մընում է մեզ գրելու:

Անշուշտ մենք չենք կարող այն բոլոր լեզուական ձևերը, որ երկու լեզուի մէջ էլ միատեսակ գրել կարելի է, այս յօդուածի մէջ թուել. այդ մեր նպատակից դուրս է և մեր ոյժերից վեր, մենք մի քանի կէտ, և յատկապէս արեւմտեան լեզուի վերաբերմամբ, կը շօշափենք միայն, որ ցոյց տանք թէ ինչպէս ենք խնդիրն ըմբռնում:

Քանի որ արեւմտեան լեզուն ենք քննութեան նիւթ անում, ուրեմն մեզ նպատակ պիտի դնենք. «Պէտք է արեւմտեան գրական լեզուն մօտեցնել արեւելեանին, գոնէ այն չափով, որ սովորական ընթերցողի համար հասկանալի լինի»:

Նախ քան այդ նպատակին հասնելը, պէտք է իմանանք թէ որոնք են արեւմտեան գրական լեզուի այն յատկութիւնները, որ չունի արեւելեան գրական լեզուն, և որ արեւելեան գրական լեզուն իմացողի համար դժուարութիւն են պատճառում արեւմտեան լեզուն հասկանալու, և թէ արդեօք հնարաւոր է, որ այդ յատկութիւնները վերանան արեւմտեան գրական լեզուից, և վերանան՝ արդեօք այդ համեմատ կը լինի՞ մեր լեզուի զարգացման ընթացքին և նոյն իսկ արեւմտեան գրական լեզուի ձգտումներին:

Արեւմտեան գրական լեզուն հինց սկզբից, ինչպէս վերեւում նկատեցինք, երկու ծայրայեղ հակումների մէջ է եղել, մի կողմից գրաբարի անչափ ազդեցութեան տակ է գտնուած, միւս կողմից վերին աստիճանի գաւառարան կամ բարբառային է եղել, Այս երկու իրար հակառակ հակումները մինչև այժմ էլ կազմում են արեւմտեան լեզուի այն զլխաւոր յատկութիւնները, որ

րոնցով այն տարբերում է արեւելեան գրական լեզուից, Գրաբար լեզուն մշակողներն այնչափ յափշտակում էին գրաբարով, որ աշխարհաբարը նրանց համար արհամարհելի էր և արժանի չէր ուշադրութեան առնուելու և մշակուելու. այդ պատճառով նրանք կամ զուտ գրաբար էին զըրում, կամ, եթէ ժողովրդին հասկանալի էին ուզում լինել, զրում էին լոկ բարբառով, Գրական աշխարհաբար լեզուի սովորական լեզու, սովորեկն կոչումը, որ և հնուց բարբառներին յատուկ կոչումն էր, մինչև վերջերս էլ երբեմն տրուում է աշխարհաբար գրական լեզուին. այդ ժամանակի ծնունդ է և վկայ է այն արհամարհանքին, որին գրական լեզուն ենթարկուած էր հինց իրենց՝ զըրողների կողմից, Բայց այդ ազգատիկ սովորեկն, ինչքան էլ արհամարհելի լինէր, քանի որ ժամանակի պահանջն էր, պէտք է մշակուէր, զարգանար, ձևերով ու բառերով հարստանար, Առ որտեղից պիտի գար այդ ճօխութիւնն ու հարստութիւնը, եթէ ոչ ճօխ ու ձևերով հարուստ գրաբարից, Առ ահա այդ սովորեկն աշխարհաբարի մէջ հեղեղի նման խուժում են գրաբարի քերականութիւնն ու բառարանը և կազմում է մի լեզու, որ շատերի գրչի տակ ոչ աշխարհաբար, կամ աւելի լաւ, ոչ սովորեկն էր ոչ գրաբար, և, կարծես, իրենք հեղինակներն անգամ պարծնում էին իրենց գրուածքի այդ յատկութեամբ, էլ չենք խօսում այնպիսիների մասին, որոնց ձգտումն էր աշխարհաբարը հետզհետէ գրաբար գարծնել և այն՝ ոչ միայն մի հեղինակի գանաղան գրուածքների մէջ, այլ հենց մի և նոյն գրքի մէջ, որի ըսկիցը, կը տեսնենք, աւելի աշխարհաբար է, մէջտեղը ոչ աշխարհաբար է ոչ գրաբար, իսկ վերջը աւելի գրաբար քան աշխարհաբար:

Արեւմտեան գրական լեզուն իր այս երկու յատկութիւնը — «գրաբարաբանութիւն» և «սովորականութիւն» կամ «բարբառաբանութիւն» պահում է և մինչև այժմ, հարկաւ, ոչ սկզբնական ձևով ու չափով, Այդ երկու յատկութիւնները տեսնում ենք և արեւելեան գրական լեզուի մէջ. այստեղ ևս աշխարհաբարը բարբառով կամ սովորեկնով է սկսում, ինչպէս Արովեանի «Վերք հայաստանի» լեզուն է, բայց շուտով այդ գաւառաբանութիւնից բարձրանում է լեզուն, գարծնալ, բնականօրէն, դէպի գրաբարը յարելով և գրաբարի ազդեցութեանը ենթարկուելով, թէպէտ և միւս կողմից շուտով գրաբարի ազդեցութիւնից ազատուելով, լեզուն իր զարգացման ուղիղ ընթացքի մէջ է մտնում, Մինչդեռ գրաբարի մի քանի քերականական ձևերը, որ Նալբանդեան, Նազարեան և ուրիշները ձգտում էին մոցնել աշխարհաբարի մէջ հետզհետէ դուրս են ընկնում, և աշխարհաբարը քերականութեամբ միայն աշ-

խարհաբար է դառնում. բառերի մթերքի և ձևի նկատմամբ աշխարհաբարի մէջ իշխող է հանդիսանում գրաբարը, իրեն օժանդակ ունենալով արարատեան բարբառը, Օրինակ, եթէ բարութիւնը, բարութեանց, կամ սննեակքը, սննեկի և լին. ձեւերն արդէն վերջնականապէս դուրս են ձգուած գրական լեզուից, այդպէս դուրս են ձգուած և էս, էդ, ևն կամ գնում ա, ընում ա և լին. դաւառական ձևերը: Աւրիշ խօսքով արեւելեան գրական լեզուն քերականութեամբ աշխարհաբար է դառնում, իսկ բառերի ձևով մեծ մասամբ գրաբար: Թողութեան սղումները բառերի մէջ, մեծ մասամբ մուտ չեն գործում գրական լեզուի մէջ, բայց եթէ միայն այդ սղումները գրեթէ բոլոր բարբառների մէջ գոյութիւն ունին ինչպէս են՝ դանել, մանել, իջնել և լին. փոխանակ գտանել, մտանել, իջանել ձևերի: Այս է եղել արեւելեան գրական լեզուի դարգացման ընթացքը: այս է կարծում ենք, և հայոց գրական լեզուների ձգումը — քերականական ձևերով աշխարհաբար, բառերի ձևով մեծ մասամբ գրաբար:

Բայց մինչդեռ արեւելեան լեզուի մէջ արագ է կատարուել այդ դարգացման ընթացքը, արեւմտեան գրական լեզուի մէջ դանդաղ է կատարուել և դանդաղ էլ դեռ կատարուում է: հարկաւ, առանձին պատճառների աղբնջութեան տակ, որոնց մէջ երկրորդական տեղ չէ բռնում գրաբարի ընդարձակ ուսմունքը: որ ունին արեւմտեան հայերը: Բայց թէ վերջի վերջոյ արեւմտեան գրական լեզուից նոյնպէս գրաբարի քերականութիւնը դուրս պիտի ձգուի ինչպէս և բառերի ուսմական ձևերի փոխանակ գրաբար ձևերը պիտի գործածուեն — այդ ցոյց է տալիս նոյն այդ լեզուի պատմութիւնը: Արքան այժմ պակասած է արդէն և հետզհետէ պակասում է այդ լեզուի մէջ գրաբարի քերականութիւնը և բուն տեղական ուսմական ձևով բառերի գործածութիւնը: Աւրիշ կերպ էլ կարելի չէ: «Թոյ հոսանքին հակառակ նաւելը դժուարին է» և ոչ միայն դժուարին է այդ, այլ եթէ մէկը կարիք չունի ջրի հոսանքին հակառակ նաւելու: բայց նաւում է, իմանալով հանդերձ, որ ջրի հոսանքն իրեն երբ և է զարձեւել ներքե պիտի քէ, այդ միայն մանկական խաղ կը լինի և ոյժերի ու ժամանակի զուր վատնում: Մեր լեզուի զարգացումը գրաբարի քերականութիւնն արդէն գրեթէ բոլոր բարբառներից դուրս է հանած, և եթէ այս կամ այն ձևը մի կամ միւս բարբառում դեռ մնացած է, այդ ևս շուտով պիտի վերանայ լեզուի մէջ իշխող մի անդիմադրելի զօրութեամբ: Եթէ գրաբար լեզուով գրելը կը նշանակէ մեռելութիւնը կենդանացնել, գրաբարի ձևերն ու քերականութիւնն ևս առանց կարիքի գործ ածելը կը նշանակէ՝ մեռելները գերեզմանատուն տանելու փոխանակ կեն-

դանիների մէջ դնել, հոսանքը քէց տարաւ գրաբարեաններն իրենց նորաստեղծ գրաբարի հետ, հոսանքը քչում տանում է արդէն կէս—գրաբարեան և կէս—աշխարհաբարեաններն իրենց շինծու լեզուի հետ: նոյն հոսանքը պիտի քէ տանի և գրաբարի քերականութիւնն աշխարհաբարի միջից, շնչին հետքեր միայն թողնելով: Աշխարհաբարը միայն աշխարհաբար պէտք է լինի և իր քերականութեամբ ոչ գրաբարեան աշխարհաբար: Աւստի պէտք է աշխարհաբարը գրաբարէն մաքրել, և ուղենք չուղենք, մէկ օր անշուշտ պիտի գրաբարից մաքրուի: բնութեան անգառնալի ընթացքն է այդ, և մենք, բնութեան այդ ընթացքի հետ գնալով, գիտակցաբար անենք այդ, և կը տեսնենք, որ երկու գրական լեզուները կարծածէն շատ աւելի մօտ են եղել իրար և մի լեզուն միւսն իմացողի համար այնպէս անհասկանալի և խորթ չէ եղել, ինչպէս այժմ է: Աւրեմն երկու լեզուները իրար մօտեցնելու առաջին պայմանը, որ հասկանում ենք, գրաբարի ինքնանշանից հրաժարուելն է այդ:

Բայց մեզ սխալ չհասկանան թէ մենք աշխարհաբարի համար գրաբարից օգտուելու դէմ ենք: ինչպէս ամեն մի ժողովրդական բարբառից կարելի է և պէտք է օգտուել գրական լեզուի համար, այդպէս և աւելի ևս գրաբարից: Միայն օգտուելու չափ ու սահմանը և տեսակը պիտի լինի: Բերենք մի քանի օրինակ այդ պարզելու համար: Եթէ մի այլազգի ուղենայ արեւմտեան լեզուն սովորել, նա իսկապէս երկու քերականութիւն պիտի սովորէ, մէկ գրաբար մէկ էլ աշխարհաբար: շատ հասկանալի է, որ մինչև նա այդ երկու քերականութիւնը չիմանայ, կարող չէ հասկանալ այնպիսի անխտիր ձևերը, որոնց երկու օրինակ մէջ բերեցինք յօդուածիս սկիզբներում: հազարաւոր այդպիսի օրինակներ կարելի է բերել, որն նոյն իսկ նոյն հեղինակն անխտիր գործ է ածում — ընկերութեանց և ընկերութիւններու, մանկանց և մանուկներու, ընտանեաց, հայրենեաց, բայց ընտանիքէ, հայրենիքէ, նաև ընտանիքի, հայրենիքի մանկունք և մանուկներ, աղջկունք, պիտոյից և պիտոյքէն, պարագայք, պարագայից և պարագաներ, պարագաներու, որոշմանց և որոշմունքներու, ստացուածոց և ստացուածքներ, սահմանաց և սահմանների, գիտնականաց և գիտնականներու: Այս օրինակները մենք երկու երեք երեսից ենք քաղել, և որքան այդպիսի գրաբար ձևեր խառն գործ են ածուում աշխարհաբարի մէջ առանց կարիքի, որով և մի քերականութիւնը երկու է դառնում: ինչպէս հասկանայ այդ լեզուն այն հայր, որ գրաբարի քերականութիւնն չէ ուսած, Այսպէս նաև կեկեկեւոյ, զինեոյ, բայց և օղիի, այգիին, գրացիին, ի քաղաքս, ի հայրենիս, բայց և քաղաքներու մէջ, հայրենիքին մէջ և լին.: Այդպիսի ձևերի

կորզի մէջ պէտք է համարել և քահանայիցմէ, յունացմէ, հայոցմէ և այլ շինծու ձևերը, որոնք այժմ արդէն ցանցառ են գործ ածուում:

Արդ եթէ այդ և այդպիսի գրարար ձևերը գուրս ձգուին աշխարհաբարի միջից, ի՞նչ կը մնայ իրրև տարբերութիւն երկու գրական լեզուների գոյականների, ածականների ու թուականների հոլովման մէջ,— շատ շնչին բան և մնացածն էլ մեծ մասամբ հասկանալի:

Քանի որ անունների հոլովման մասին օրինակ բերեցինք, շարունակենք ամբողջացնել այդ մասին քննութիւնը: Գրարարը գուրս ձգելուց յետոյ, երկու լեզուի մէջ ևս անունների հոլովման վերջաւորութիւնները կը մնան սեռ. ար. եզ. և յոգն. ի. ու. եզ. ան. գործ. եզ. և յոգն. ու. եզ. (գրարարից առած) (և) եւմբ. բացառ. եզ. և յոգն. արեւելեան լեզուի մէջ ից, արեւմ. կ(և). հայց. եզ. և յոգն. նման ուղղականին և յոգն. միատեսակ եր-ներ. իսկ արեւելեան լեզուի մէջ, եթէ անձի անուն է և որոշ է, նման տրականին, Երկու լեզուի այս հոլովական տարբերութիւնն այնքան ջրնչին է, բացի տրականին նման հայցականից, որ հասկանալի լինելու համար դժուարութիւն չի պատճառիլ. զի փոյթ չէ մի բառ մի լեզուի մէջ սեռականն ի կուսնեայ, միւս լեզուի մէջ՝ ու. մէկի կամ մէկու. եկեղեցու կամ եկեղեցիի. այդպիսի տարբերութիւններ նոյն իսկ մի և նոյն գրական լեզուի մէջ շատ կան. ինչպէս արեւելեան լեզուի մէջ անխտիր գրում են մարզու և մարզի, կամ օտարագրի անունները — Գարիբաղիի նմաններ, Այդպէս և յոգնակի սեռականը, եթէ մի լեզուի մէջ ի է, միւսի մէջ՝ ու, հասկանալի լինելու համար դժուարութիւն չի պատճառիլ, քանի որ նոյն ի կամ՝ ու վերջաւորութիւնը եզակիի համար կայ և յոգնակիի մէջ այդ վերջաւորութեան զիտակցութիւնը չի կորչում: Այսպէս և արեւելեան զըրական լեզուն իմացողի համար մի առանձին զըժուարութիւն չի պատճառի բացառականի արեւմտեան կ(և) վերջաւորութիւնը, քանի որ արեւելեան բարբառների մեծագոյն մասի մէջ ևս բացառականը կ(և), (ան), եւմկն է վերջանում, և մի զարմանալի բախտով է այդ ից վերջաւորութիւնը գրական լեզուի մէջ իշխող դարձել, և նոյն իսկ բացառականն ից ունեցող բարբառների մէջ ևս անկ տուն, զոնկ դուռ, պատկ պատ և նման ձևերի մէջ բացառականն կ ու է վերջանում:

Գրարարի քերականութիւնը գուրս ձգելուց յետոյ, ուրեմն, արեւմտեան լեզուի անունների հոլովման ձևերը կատարելապէս հասկանալի են դառնում արեւելեան լեզուն իմացողների համար. իսկ վերջինիս տրականի նման հայցականը, բացառականի ից և ներքոյականի ում վերջաւորութիւնները միայն պէտք է դժուարութիւն պատճառեն

արեւմտեան լեզուն իմացողների համար. Բայց կարծում ենք, թէպէտ և մեր խնդրից գուրս է, աւելորդ չէ ասել, որ քանի որ արեւմտեան բարբառի մէջ ներքոյական հոլով չկայ, ամենայն հնչատութեամբ կարելի էր արեւելեան լեզուի ում վերջաւորութիւնը մտցնել անոր մէջ, ինչպէս և մէկ մէկ պատահում են այդպիսի փորձ անողներ, ի թիւս որոց և հ. Ալիշանը, Չպիտի համարել, թէ այդպիսի փորձն անյաջող կը լինի, եթէ ի քաղաքս, ի հայրենիս ի գաւառս և ըն. գրարար ձևերն, որ նոյնչափ, գուցէ և աւելի խորթ են արեւմտեան բարբառներին, գործ են ածուում գրական լեզուի մէջ, կարելի է և քաղաքներում, հայրենիքում, դաւառներում գրել, եթէ մի խորթ ձև պէտք է ընդունել, շատ աւելի լաւ է, փոխանակ հնացած գրարարն ընդունելու, այն ձևն ընդունել, որ կենդանի է և ժողովրդական բարբառների մի մասի մէջ ու մի գրական լեզուի մէջ գործածական է: Այսպէս գատելով, կարծում ենք նոյնպէս և կեղեցոյ(ն), գինւոյ(ն), այգւոյ(ն) գրարար ձևը ձգելու ժամանակ, լեզուի միութեան տեսակետից, սխալ են գործում նրանք, որ գրում են կեղեցոյի(ն), այգիի(ն), գինիի(ն), քանի որ բարբառներից շատի մէջ կեղեցու(ն), այգու(ն), գինու(ն) է, և քանի որ այս վերջին ձևն ընդունուած է արեւելեան գրական լեզուի մէջ:

Մի անգամ որ անունների տարբերութեան և ամբռնեցման մասին գրեցինք, կարծում ենք լրացնելու համար պէտք է որոշեալ (ը) ն և անորոշ (մի, մը, մ', մըն) յօդերի մասին էլ մի քանի խօսք գրել, զի գոյականները սովորաբար որ և է յօդով են գործածուում, իսկ յօդերի գործածութիւնը երկու լեզուի մէջ բաւական տարբեր է, թէպէտ և ոչ այն աստիճանի, որ մի կամ միւս կողմի համար անհասկանալի լինի:

Մինչդեռ հին լեզուի մէջ որոշեալ յօդը միայն և տառն է, որը բաղաձայնով սկսուող բառերի առջև ըն ենք արտասանում, աշխարհաբարի մէջ այդ ըն դարձած է լոկ ը: Այդ մեր լեզուի զարգացման հետեանքն է, որը փոխել չենք կարող: Սակայն արեւմտեան գրական լեզուի վրայ այս դէպքում ևս գրաբարի ազդեցութեան տակ ընդհանրապէս և են գրում նոյն իսկ բաղաձայնով սկսուող բառերի առջև: Աւերջերս միայն ուշադրութեան են առնում թէ բաղաձայնով սկսուող բառերի առջև ը պէտք է գրել, իսկ ձայնաւորով սկսուող բառերի առջև տարակարծիքներ կան: Յօդուածիս առաջին մասերում ասանք, որ կան առաջարկողներ, որ ն յօդը «պահուի» ի, ի, ի, ի, ի առջև, իսկ յարգելի Ծաղկաբաղն առաջարկում է, «որ ամեն ձայնաւորի (ոն և ն մէջն առած) առջև անխտիր և ի և ի առջև պահուի» և յօդը և ը չգրուի: Արդ որն է այս առաջարկութիւններից ընդունելին, Արար

ճում ենք աւելի առաջինը, քանի որ հազագային
 և և հասնելուն յ գիրը կէս ձայնաւոր համարելու
 ոչ մի հիմք չկայ այդ հնչիւնները նոյն իսկ մայ-
 նական հնչիւն (stimmbarer Laut) չեն, քանի որ ա-
 դոնց արտաբերութեան համար կոկորդի լարերի
 ձայնը չի միանում, ինչպէս բոլոր ձայնաւորների
 արտաբերութեան ժամանակ լինում է, 2 և հա-
 հնչիւն յ գրիւրը, այսինքն հնչիւնները բաղաձայն
 են և միայն բաղաձայն. մեղ չպիտի խաբէ այն
 հանգամանքը, որ առանց որևէ ձայնաւորի օգ-
 նութեան հ կամ յ կարելի է արտաբերել, ինչ-
 պէս գ. դ. ու փ. ժ. և ուրիշ բաղաձայններ, եթէ
 վերջիններս կէս ձայնաւոր չեն, այդպէս և և կամ
 յ հնչիւնները, Այս միայն հասնելուն յ գրիւրէ բա-
 ղաձայն, այլ և յ, ց հնչիւնով յն թէպէտ և այս
 տառը հին քերականութիւնների մէջ կէս ձայնա-
 ւոր անունն է կրում, զի իր փոփոխութեամբ մօ-
 տենում է ձայնաւորներին և առանց հետ հեշտու-
 թեամբ միանալով երկարաբառներ է կազմում. ինչ-
 պէս հայերէնի մէջ այ, ոյ կամ բառերի մէջ յա,
 յո, յու և շն. (օր. արքայութիւն, ծառայական,
 ծառայով). Այս յ, ց հնչիւնով արտասանում ենք
 բառի սկզբում սովորաբար և և տառը, որ եթէ
 գրաբարի մէջ ձայնաւոր է եղել օ արտասանու-
 թեամբ աշխարհաբարի մէջ մի վանկ է կազմում
 je ye հնչիւնով, Այսպէս և ո գիրը եթէ գրաբարի
 մէջ բառի սկզբում ձայնաւոր է եղել օ հնչիւնով,
 այժմ նոյն դէպքում սովորաբար կազմում է մի
 վանկ, ո—փո՛ս ո, մի բաղաձայնից և մի ձայնաւորից
 կազմուած: Արդ եթէ արտասանում ենք ես—
 yes, երեւել—yerevel, երեք—yerek, և ոչ էս, էրեւել,
 էրեք. այսպէս և ոսկի—voski, որ—vor, որոնել—
 voronel, և ոչ օսկի, օր, օրոնել, այն ժամանակ
 պարզ է, որ այդ դէպքերում եի և ոի ձայնաւոր
 լինելու խնդիր չի կարող լինել, ուստի և այդ տա-
 ուերով սկսուող բառերի առջև էլ յ գիրը պիտի
 լինի իրրև որոշեալ յօդ, ինչպէս և յ, հ և ամեն
 բաղաձայններով սկսուող բառերի առջև: Սակայն մի
 հանգամանք պէտք չէ աչքից փախցնել. այդ այն
 է, որ բառասկզբում ամեն և ու սկսուող բառերի
 առջև յ, ց հնչիւնը չի գրւում և են շատ անգամ
 պարզ և է մնում: Այդպիսի բառերից է օրինակ
 էական բայը՝ եմ, ես (է), եմ, ուստի և
 կարելի չէ գրել՝ ես այն մարդը եմ, նրանք այն
 մարդը են և շն. այլ միայն՝ մարդն եմ, մարդն են,
 ինչպէս և մարդն է՝ և յօդի յատկութիւնն է աշ-
 խարհաբարի մէջ, որ արտաբերութեան ժամանակ
 պէտք է միանայ յաջորդ բառի սկզբին, իսկ եթէ
 ոչ՝ և յօդը գառնում է յ: Այս յատկութեան հե-
 տեանքն այն է լինում, որ նոյն իսկ ձայնաւորով
 սկսուող բառերի առջև յ է արտաբերում, երբ
 յօդի և իրեն յաջորդող բառերի արտաբերութեան
 միջև տեղի է ունենում երկար կամ կարճ «գա-

դար», որ որևէ կէտադրութեան նշանով , , —
 որոշում ենք, երբեմն և չենք որոշում: Աւստի ոչ
 միայն վերջակէտից, այլ կէտադրութեան բոլոր նը-
 շաններից առաջ յ պէտք է գրել. նոյն իսկ երբ կէ-
 տադրութեան որևէ նշան չենք գնում, բայց «գա-
 դարն» իրօք կայ, այդ ժամանակ ևս յ կարելի է
 և լաւ կը լինէր գրել, Աւելորդ չի լինիլ, կար-
 ծում ենք, որ և այս նկատանք, որ առաջ արտաբե-
 րութեան ժամանակ յաջորդող եի (երբեմն և ոի)
 առջև յ յօդը յաճախ եի է փոխւում. այդ ժա-
 մանակ են (ոն) կորցնում է իր սկզբի յ, ց հնչիւնը,
 (իսկ ան յ հնչիւնը)—և գառնում է ե (օ), իսկ
 եթէ յ, ց հնչիւնը չի կորչում, իրիստ կարճանում
 է և այնքան թեթեւ է արտասանում, որ հեշ-
 տութեամբ եի հետ է միանում: Այս արագ ար-
 տաբերութիւնը միայն ի նկատի ունենալով կարելի
 է թողլ տալ, որ ե—ye հնչիւնի առջև և յօդը
 գրուի. թէ ե—je, ye (իսկպէս յ, ց) հնչիւնի հետ
 չի միանում իրեն նախորդող բաղաձայնը այդ փորձով
 նկատած կը լինին հայերէնի առաջին տարիների
 ուսուցիչները. ուղղագրութեան գեռ չվարժուած
 երեխաներն ընդհանրապէս հետեւեալ ձևով են վան-
 կերը բաժանում. սեն—եակ, Թարութիւն—եան,
 գործուն—եայ, Իսկ ես—ja, ya:

Փոխանակ և յ բաղաձայնների առջև ն գրե-
 լու, լեզուի արտաբերութեան ոգին պահանջում է
 գ, ս, շ բաղաձայնների առջև և գրել, և այս անոր
 համար, որ այդ հնչիւնները բառասկզբում կարճ
 յ ու լ են արտաբերում. ուստի մարդն (ը)զգաց,
 մարդն (ը)շտապեց, մարդն (ը)սպասեց, բայց ոչ
 մարդն հոգին, մարդն յանցանքն (և ոչ մարդն (վ)
 որդուն, եթէ միայն չենք արտաբերում մարդ—
 նորդուն), քանի որ առաջիններն արտաբերում ենք՝
 ն յաջորդ բառին կցելով մարդ—նզգաց, մարդ—
 նշտապեց, մարդ—նսպասեց, իսկ վերջինները չենք
 արտաբերում ևրկու բառը միացնելով. մարդ—
 նհոգին, մարդ—նյանցանքը:

Այս է մեր աշխարհաբար լեզուի և և յ յօդի
 արտաբերութեան իսկական ոգին, որքան մենք ըմ-
 բռնել կարող ենք. և արևելեան գրական լեզուն,
 ժողովրդի լեզուին հետեւելով, ընդհանրապէս հե-
 տեւում է վերելում արած նկատողութիւններին.
 ուստի և արևմտեան լեզուն, եթէ միանգամ պիտի
 որոշէ և և յ յօդերի գործածութեան եղանակը,
 կարծում ենք դարձեալ ժողովրդի արտաբերու-
 թեան պիտի հետևի և այսպիսով երկու լեզուները
 և և յ միակերպ գործ կաճեն:

Բայց գեռ յօդի գործածութեան մի մեծ
 տարբերութիւն դարձեալ մնում է երկու լեզու-
 ների մէջ, Արևելեան լեզուի մէջ որոշեալ յօդը
 պահւում է ուղղականի, տրականի և հայցականի
 մէջ անպատճառ, լինի բառը հասարակ թէ յա-
 տուկ անուն իսկ արևմտեան լեզուի մէջ յատուկ

անունների ուղղականն ու հայցականը զեռ ևս յաճախ գրաբարի ձևով առանց յօդի են գրում, թէ պէտ և տրականն ու բացառականը յօդով են գրում. Գարծում ենք, ուղղականն ու հայցականն ևս յօդով պէտք է գրել, եթէ միայն չենք ուզում այն բարբառներին հետեւել, որոնց մէջ ոչ միայն յատուկ, այլ հասարակ անուններն առանց յօդի են մտում, ինչպէս. «այն մարդ ասաց, այն ջուր աղէկ չէ», եթէ գրում ենք «այն մարդն ասաց, այն ջուրն աղէկ չէ», այսպէս և պէտք է գրենք. «Ստեփանոսն ասաց թէ Բագրատունին մեռաւ, իսկ Մյոնեանն բարձրացաւ, և ոչ թէ «Ստեփանոս ասաց թէ Բագրատունի մեռաւ, իսկ Մյոնեան բարձրացաւ», եթէ այս տարբերութիւնները վերանան— և անշուշտ մի օր պիտի վերանան, ինչպէս որ արեւելեան լեզուից արդէն վերացել են— այն ժամանակ երկու լեզուի մէջ յօդի գործածութեան միակ տարբերութիւնը կը մնայ սեռականի մէջ, Այդ այն է, որ արեւելեան լեզուի մէջ յատկացուցչի* որոշեալ յօդը դուրս է ձգուած, իսկ արեւմտեանի մէջ զեռ պահուած է ընդհանրապէս, Արդարեւ, արեւելեան հայերին այդ տարբերութիւնը ոչինչ գծուարութիւն չի պատճառում հասկանալի լինելու համար, այլ միայն փոքր ինչ ծանր է թւում կարգաւ՝ «այս գործին վրայ, իւր ծարաւին յագուրդը, իրեն մատուցուած փրկւելին մէջ, այս հրապոյրքին հետեանքները» ևլն. ևլն. Այս և նման ձևերում արեւելեան լեզուի մէջ յօդը զեղջուում է, և այդ զեղջումը հետզհետեւ անցնում է և բացառականին ից(ը), գործիականին ով(ը), եամբ(ը), և ներգոյականին ում(ը), որոնց վերջին ք գիրը շատերը յաճախ չեն գրում, և կարելի է կարծել թէ ժամանակին այդ հոլովներն ևս սեռականի նման և որոշեալ (և ոչ և դիմորոշ) յօդը պիտի կորցնեն, Այս է մեր արեւելեան լեզուի զարգացման ընթացքը յօդի վերաբերմամբ:

Այժմ ինդիքն այն է, թէ եթէ այս ղեպքում ևս երկու գրական լեզուի միութիւն պէտք է լինի, որ ձեռը հարկ է ընտրել, պէտք է և կարելի է արեւելեան լեզուի մէջ սեռականի յօդը պահել, ինչպէս ոմանք փորձել են այդ անել, թէ արեւմտեանի մէջ սեռականի յօդը պէտք է վերանայ, Թէ արեւելեան լեզուի մէջ այս յօդը մտցընելու փորձերն անյաջող կանցնին, աչոր հաւատացած ենք, քանի լեզուի զարգացմանը հակառակ է այդ, իսկ ընդհակառակն եթէ կարողանանք ապացուցանել, որ արեւմտեան բարբառների և նոյն իսկ գրական լեզուի մէջ նոյնպէս կայ յատկացուցչի յօդը վերացնելու ձգտումը, այն ժամանակ կար-

ծում ենք, որ այս ղեպքում ևս արեւմտեան ղեքական լեզուն արեւելեանին պէտք է հետեւի, Աւմենք իրօք գտնում ենք, որ արեւմտեան լեզուի մէջ ևս այս ձգտումը կայ, Բերենք մի քանի օրինակներ.

1. Գրաբարի ձևով հոլոված բառերի վրայ սեռականի յօդը թէ պահուած են և թէ չեն պահուած, անցելոյն հոլին մէջ, պատանոյն միտքը, նոյն անձին գործոցն զարգացումն, ինդրին պաշտպանութեանը համար, իր յիշողութեանը մէջ, բայց և անյօգ՝ իր ներկայ կենաց վրայ, իր ընտանեաց ծոցին մէջ, իւր ուսուցչաց առջև, Ախենայի աշխարհագրական ընկերութեան նախագահին, հեղինակին Փրկասիրութեան կէտը, անոր դաստիարակութեան վրայ, մեր կրթութեան համար ևլն. ևլն.

2. Այսպէս մեծ մասամբ առանց յօդի գրւում է և յատուկ անունների սեռականը:

3. Աշխարհաբար հոլոված յատկացուցչիչների անյօգ գործածութիւնը նոյնպէս հաղուագէպ չէ. օրինակ. հայերեկի հետ մշակել իւր շահներեկի ուսմունքը, թօթափած էր գրակաշուի . . . ուսմանց լուծը, վարգապետ մըլլալու փոյթը, գրաբարի ուսումն. հայարեակ գաւառներու ժողովրդեան բերնէն . . . գրաբարի եւ աշխարհաբարի կոիւնները, հայերեկի վրայ, ակնդարեակներու մարդիկներէն, զպրոց յաճախող և յաճախողներու մի միակ լեզուն, յաջորդ սոյներու խորհրդածութիւնը, այս սոյներու ճըշմարտութիւնը. նոյն ժամանակի կարօտը, վանաց վարժարանի դասատուութեան զբաղած, այս վերոյ յիշեալ մակապարժներու բառարաններուն մէջ. նոյն ժամանակի գիրքն, ամեն տեղ էր վարժարանի մէջ, իրենց բարձր պաշտակներու մէջ, անգամ հայրապետական ծխարանի մասնաժողովոյն, իւր ժամանակի աշակերտներէն . . . կը հաւասարցնեն ամենամեծ արարակներու բազմատեսակ գրեր ունենալու պատուոյն, իւր գրութեան գործոցներու ամենափառաւորը, արիներու բեռը, Այս օրինակները թեթեւակի թերթերով քաղած ենք մի փոքրիկ բրոշուրից* միայն, բոլոր ընդգծած բառերը որոշեալ սեռական հոլովով են, բայց առանց յօդի, Այդպիսի օրինակներ աւելի ևս կարելի է գտնել ժողովրդական լեզուի ազդեցութեան տակ գրուածների մէջ և որ զլիաւորն է, առանց յօդի գործածութիւնը հետզհետեւ շատանում է և յօդով գործածութիւնը տատանման մէջ է, մանաւանդ լրագիրների լեզուի մէջ, Օրինակներ բերելն աւելորդ ենք համարում, —Աւերմն եզրակացութիւնը պարզ է, արեւմտեան գրական լեզուն արեւելեանի ճանապարհով է ընթանում սեռականի յօդի նկատմամբ, ուստի և միութեան համար ոչ թէ արեւելեանի լեզուի մէջ սեռականի վրայ յօդը վերականգնելու ապարդիւն փորձը պի-

* Կատարուցի կարգին նմանում եւ հետ վրայ, մէջ եւլն նախադրութիւնների խնդիրը:

* 2. Գ. Մեկնիլիշեան, կենսագր. սկիւարի Գեր. Արսէն աբխազաբարի Աշխենան, Վիեննա, 1895.

տի անել, այլ արևմտեան լեզուի մէջ ևս այդ յօդը պիտի վերացուի:

Անցնենք մի: մը: մ', մըն անորոշ յօդին, քեզ վերջին երեք ձևը մի բառի սղումն են, պարզ է. մըն ձևը մեզ կարծել չպիտի տայ թէ ունի կամ խնի բառի սղումն է. այդ ձևն ևս որ ձայնաւորի առջևն է գրուած, միև ձևի սղումն է. Աւրեմն թէ արևելեան և թէ արևմտեան լեզուի մէջ մի թուական անունն ունինք իբրև անորոշ յօդ, ինչպէս որ ուրիշ լեզուների մէջ ևս նոյն թուականն է իբրև անորոշ յօդ գործածուած. Մեր Հին լեզուի մէջ ևս գտնուած ենք նոյն թուականն իբրև անորոշ յօդ գործածուած. բայց մինչդեռ Հին լեզուի մէջ թուականներն ու ածականները թէ նախագաս և թէ յետագաս են վարուած, նոր լեզուի մէջ միայն նախագաս: Այդ օրէնքին ենթարկուել է և մի բառն արևելեան լեզուի մէջ, բայց արևմտեան լեզուի մէջ յետագաս է մնացել և սղուելով մը, մ', մըն ձևն է ստացել: Պահանջել որ արևմտեան լեզուի մէջ ևս նախագաս գրուի այդ բառը՝ չենք կարող. թէպէտ և կան այդպէս գրողներ ևս, բայց ցանկանալ որ գոնէ քանի մը, մարդ մը, մարդ մ', մարդ մըն գրելու տեղ քանի մի, մարդ մի գրեն, այդ կարծուած ենք թէ կարող ենք: Այդպիսով գոնէ եթէ շարագասութեան կողմից միատեսակութիւն չի մտնիլ երկու լեզուի մէջ, բառերի ձևով միատեսակութիւն կը ստանանք: Պահանջել որ արևելեան լեզուն մը, մ', մըն ձևն ընդունի, այդ կը լինէր անհնարինը պահանջել, քանի որ մի ձևն իր հաստատուն գիրքն ունի. իսկ արևմտեան լեզուի մէջ այդ հաստատուն գիրքը չկայ. գրուած են մարդ մ' էր, մարդ մըն էր, նաև մարդ մը (բաղաձայնից առաջ) և մարդ մի (թէ բաղաձայնից և թէ ձայնաւորից առաջ), այլ և մի մարդ, քանի մը, քանի մ', քանի մի, այլ և մի քանի, պատրիարքական կոնդակ մը, այլ և պատր. մի կոնդակ:

Աւելորդ չի լինիլ գուցէ նկատել, որ արևմտեան գրական լեզուի մէջ անորոշ յօդի չափազանց գործածութիւն կայ. շատ դէպքերի մէջ կարելի է բառն ընդհանուր ձևով գործածել, առանց որևէ յօդի կամ որոշեալ յօդով, բայց մը յօդով են գրուած. Օրինակ հենց եթէ այս ծանօթութիւնը արևմտեան գրական լեզուով գրուի, գուցէ վեց եօթն անգամ մը գրուի. «Աւելորդ չի լինիր գուցէ նկատել, որ արևմտեան գրական լեզուին մէջ անորոշ յօդի չափազանց գործածութիւն մը կայ. շատ մը դէպքերու մէջ կարելի էր բառ մը ընդհանուր ձևով մը գործածել, առանց որևէ յօդի մի կամ որոշեալ յօդով մը, բայց մը յօդով մը կը գրեն»: Այս եօթն մը բառի գիմաց արևելեան լեզուի մէջ և ոչ մի մի չկայ, այլ առանց յօդի է. «բառ մը» ձևի գիմաց միայն որոշեալ յօդով «բառ մը» է, որ կարելի էր և «մի բառ» գրել, Գուցէ

մի երկու բառի վրայ ևս մի աւելցնել կարելի լինի, բայց լեզուն այդ մի-երը գուրս է ձգած. Պարծուած ենք, լեզուների միութեան տեսակետով, արևմտեան լեզուի մէջ ևս գրողները պիտի ջանան առանց մը յօդի ձև ընտրել ինչպէս և շատերը յաճախանում են, եթէ կարելի է և այդպէս գրել: Մը-ի յետագաս գրուելու պատճառով նոյնպէս շատ կըրկնութիւններ են առաջ գալիս. օրինակ «Արևելեան Մամուլի» 1897 թ. 11. եր. 587 կարդում ենք. «Անոնք՝ որոնց ծագումը կապուած է տոհմային աւանդութեան մը, դէպքի մը, նախապաշարման մը, սովորութեան մը, կամ բարբի մասնաւորութեան մը հետ, մինչդեռ արևելեան լեզուի մէջ բառական կը լինէր ամենի տեղ մի անգամ միայն նախագաս մի գործածել, գրելով «մի տոհմային կամ տոհմային մի աւանդութեան, դէպքի. . . ևն, ինչպէս և տոհմային ածականը մի անգամ է գրած, բայց վերաբերում է ոչ միայն «աւանդութեան», այլ և «դէպքի» նախապաշարման, սովորութեան, բարբի մասնաւորութեան» բառերին: Քանի որ «Արևելեան Մամուլի» մէջ հազուադէպ չէ նախագաս մի գրելը, կարծում ենք այսպիսի դէպքերի մէջ մասնաւոր, մը-ի կրկնութիւններէն զերծ մնալու համար, լաւ կը լինէր որ մի բառը նախագաս գրուէր:

Միև կողմից թէ մի բառն աւելի հեշտութեամբ արևմտեան լեզուի մէջ կարող է մտնել, քան մը, մ', մըն ձևերն արևելեանի մէջ, այդ բանին կը համոզուենք, եթէ ի նկատի ունենանք մեր երկու գրական լեզուների ձգտումը բառերի ընտրութեան մէջ. Արդ ինչ է այդ ձգտումը, Աւրեմն տեսնեք որ արևելեան գրական լեզուն բառերի ձևի ընտրութեան մասի մէջ հետևում է մեծ մասամբ գրաբարին և ոչ ժողովրդական բարբառներին. բառերի գրութիւնն ամբողջապէս գրաբար է. գրական լեզուի մէջ ոչ բաղաձայնների և ոչ էլ ձայնաւորների կամ երկարբարանների փոփոխութիւններն են մտել (ինչդեռ արտասանութեան մասին չէ): Ձայնաւորների սակաւածիւ սղումներն ու փոփոխումներն միայն ընդունուած են գրական լեզուի մէջ, այն էլ այնպիսի ձևերը, որոնք գրեթէ բոլոր բարբառների մէջ կան. ինչպէս մ(ա)անել, գ(ա)նել, իջ(ն)ել, ել(ա)նել ևն. Գրական լեզուի մէջ ընդհանրացած մի քանի «ուսմկաձև» բառերն այդ կանոնը չեն խախտում. ինչպէս օրինակ ել (այլ) շաղկապը, որի փոխանակ յաճախ եւս են գրուած, Արևելեան գրական լեզուի այս յատկութիւնը բառերի ընտրութեան վերաբերմամբ թէպէտ և արագ, բայց հարկաւ միանգամից չէ կատարուած. Եթէ արևմտեան գրական լեզուին գառնանք, նոյն ձրգտումը բառերի ձևի ընտրութեան մէջ՝ կը գտնենք և այստեղ, Այժմեան արևմտեան գրական լեզուն և նոյնը մի քան-երեսուն և աւելի տարիներ առաջ բառերով նման չեն իրար, Եթէ մի երեսուն և ա-

ւելի տարիներ առաջ այդ լեզուն իր բառերի ձևով ուսմիտեմ կարելի էր անուանել այժմ այդ այլ ևս կարելի չէ, թէպէտ և դարձեալ «առմկաձե» զըրուած բառեր զեռ շատ կան այդ լեզուի մէջ. զեռ յաճախ կը պատահենք մի և նոյն բառին, գրարարի և բարբառային ձևով գրուած, Եւ զարմանալի է որ արեւմտեան լեզուով գրողները որոնց այնքան սիրելի է գրարարի քերականութիւնը, որոնց զըջի տակից հազարաւոր գրարար քերականական ձևեր և տւելի շատ գրարար բառեր են դուրս գալի, մի շարք բառերի համար խորշում են գրարարի կամ գրարարին մօտ ձևերից. ինչպէս ասել, ասացի չեն գրում, այլ ըսել, ըսի, Բան չէինք ունենալ, անշուշտ, ասելու եթէ արեւմտեան լեզուի մէջ բառերի գրութեան համար «առմկական» ձևն ընդունուած լինէր. * բայց այդպէս չէ իրօք, անոր մէջ ևս գրարարն է ընդունուած, այլ միայն որոշ բառերի համար «առմկական» ձևը գրարարի վրայ գերիշխող է միայն, Բերենք մի քանի օրինակներ.

- 1. հասկնալ, հասկանալ.
- 2. գողնալ, գողանալ.
- 3. հաւնիլ, հաւանիլ.
- 4. մոռնալ, մոռանալ.
- 5. ըլլալ, լինիլ.
- 6. հաւատալ, հաւատալ.
- 7. ճանչնալ, ճանչել, ճանաչել.
- 8. վախնալ, (վախնալ).
- 9. վայել, վայելել.
- 10. հարսնիք, հարսանիք ևլն. ևլն.

Այսպէս և ելլալ, ելլել, ելնել (կայ և ելնալ). քաղբի, քաղբէն, բայց և քաղաքի, քաղաքէն. կը գտուի, բայց և կը գտնուի, կրնալ, կարենալ, կրցայ, կրցի, ըսել, (ասել), ընել, (անել). սորվեցնել, սովորեցնել, (սովորեցնել). զիտնալ, զիտցայ, բայց զիտեմ, և չեմ զիտոր (և ոչ՝ չգիտեմ). իյնալ, ինկնել, ինկաւ, անկանիլ, (ընկնել). երգել, բայց կ'երգուեցին, փոխանակ կ'երգուին, ինչպէս կը սիրուին, Այսպիսի բառերի ցուցակ մենք կարող չենք տալ, բայց կարծում ենք այսքան ևս բաւական է ինդիք վարդելու համար, Աւերի բառերի երկրորդ կամ վերջին տեղում գրուածները նոյնպէս աւելի կամ պակաս յաճախութեամբ, գործ են ածուած արեւմտեան լեզուի մէջ. բայց առաջին տեղերում գրուածները, որոնք բարբառային են, աւելի յաճախ են, Անշուշտ մի օր լեզուն ընտրութիւն պիտի անէ այդ երկաձև, եռաձև ու բազմաձև գրութիւնների մէջ և պէտք է կարծել, որ հասկանալ, մոռանալ, գողանալ ձևերը, analo-

ցիօ-ի հիմամբ, իշխող պիտի դառնան, քանի որ տասնեակ հարիւրաւոր անալ վերջաւորութեամբ բայեր կան՝ զարմանալ, գոհանալ, ընթանալ, յառաջանալ, զարգանալ, հեռանալ, թերանալ, հանդիսանալ ևլն. ևլն. Այսպէս և միւս բառերի մէջ (ճանաչել, վայելել և նմանները) գրարարը կարծում ենք, իշխող պիտի դառնայ, եթէ ժողովրդական և գրարար ձևերի նշանակութիւնները տարբեր չեն, Իսկ այն ձևերից որոնք գրարար չեն, գրարարի մօտ ձևը պիտի իշխէ. ինչպէս ելնել, փոխանակ, ելլալ, ելլել, ելնալ, բանալի(ք) փոխ, բալլիք, ինկնել (ընկնել) փոխ, իյնալ ևլն. այսպէս և մէկ մէկ փոխանակ մէյմէկ, և նմանները.

Ամփոփենք մեր եզրակացութիւնները մեր երկու գրական լեզուի միութեան նկատմամբ.

- 1. Միութիւնը մենք այժմէն իսկ անհրաժեշտ կարևոր ենք համարում.
- 2. Խօսակցական և գրական լեզուները տարբեր են, Գրական լեզուն ոչ մի բարբառ չէ, անոր կազմութեան օժանդակում են բոլոր բարբառները և գրարարը, փոխադարձ «դիջուժներով», Մի բարբառ միայն իշխող է լինում, Այդ «դիջուժը» պէտք է կազմէ և երկու լեզուների միութեան հիմքը.
- 3. Լեզուի բազմութիւն ձևերի մէջ բնական ընտրութիւնն, անգիտակցաբար լինում է, նոյն «ընտրութիւնը» եթէ գիտակցաբար բայց լեզուի զարգացման ընթացքին և ոգուն համեմատ է լինում, խորթութիւն չէ բերում լեզուի մէջ, այլ միայն անոր զարգացման ընթացքն արագացնում է.
- 4. Լեզուների միութեան համար պիտի ջանայ ամեն անհատ, որ լեզուների միութեան կարևորութիւնը հասկանում է.
- 5. Լեզուների միութիւնն այժմ մենք անհնար ենք համարում, բայց երկու լեզուն, հասկանալի լինելու չափով, իրար մօտեցնելը հնարաւոր.
- 6. Երկու լեզուի էական տարբերութիւնը կը և ում ձևն է բայերի մէջ և մասամբ անձի անուն ցոյց տուող որոշեալ հայցականը, որ արեւելեան լեզուի մէջ տրականին նման է, իսկ արեւմտեանի մէջ հայցականին, կը կամ ում ձևերից մէկի կամ միւսի դիջումն անհնար է, առանց որ և է զօրաւոր հանգամանքի, կը և ում ձևերը լծողնելով, երկու լեզուի ուրիշ կողմերը կարելի է իրար մօտեցնել.
- 7. Երկու լեզուն իրար մօտեցնելու համար անհրաժեշտ են ուսումնասիրութիւններ անոնց և ընդհանրապէս հայոց լեզուի զարգացման ընթացքն իմանալու համար և թէ ինչպէս է բնականօրէն կատարուել և կատարում է երկու լեզուի մերձեցումը, Այդ բնական ընթացքին պէտք է հետևել գիտակցաբար վարժուելու ժամանակ.
- 8. Պէտք է հրաժարուել գրարարի քերականութիւնից, Աշխարհաբարը քերականութեամբ միայն աշխարհաբար պէտք է լինի, Իսկ բառերի ձևի


* Ինդիքն «առմկական» բառերի համար չէ, ինչպիսի ևն լո՛վ, և սե՛ն ևլն. որովք գրարարով լիան, ուսի և գրական լեզուի մէջ մեկնելով՝ մի մեկ միայն կուենան:

կողմից քանի որ երկու լեզուն ևս գրարարին են հետևում, պէտք է ձգել այն «ամբօրէն» կամ տեղական բարբառային ձևերը, որոնք երկու լեզուի մէջ ևս չկան: Այս երկու պայմանը կատարելով արևմտեան լեզուն շատ կը մօտենայ արևելեան լեզուին և ամեն մի արևելեան ընթերցողի համար հեշտ հասկանալի կը լինի:

Այսքանով բաւականանալով այլ ևս չենք մտնում գերանունների, բայերի ևլն. տարբերութիւնների քննութեան մէջ:

Մ. Արեղեան.

Վիեննա.



ՀԱՄԱՌՈՏՈՒԹԻՒՆ

ԲԻԻԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՄՐԵՐԻ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ.

ԱՅԹԱՏՈՒԹԻՒՆ Հ. ԳԵԼՄԵՐԻ.

(Շարունակութիւն) *

Յուստինիանի իւր կառավարութեան ըսկրզներում արձակած մի շարք հրովարտակները ապացուցանում են, թէ ինչպիսի եռանդով ձգտում էր որ կայսերական հաւատը բոլոր հպատակներն ընդունեն: Հին հերձուածողների մնացորդները, որոնց մէջ Արիանոսները իրենց հիմնարկութիւնների հարստութիւններով կառավարութեան ազահութիւնը շարժել էին, կրեք ամիս ժամանակ ստացան ընդունելու պետութեան կրօնը. այլպէս սպառնում էր սքսոր: Սամարիները վրայ էլ գործադրեցին կրօնափոխութեան այդ բանի ձևը: Բայց բոլոր ժողովուրդը ոտքի կանգնեց և մի նոր կայսր հրատարակեց: Միայն արեան հեղեղների մէջ ընկճուեց ազատամբութիւնը: Երկիրը կործանուեց: Դրա հետ միասին սկսուեց կանոնաւոր ինկվիզիցիական դատաստան հիլենական կրօնի բոլոր թէ ծածուկ և թէ յայանի հետևողների դէմ: Բայց հէնց բարձր դասակարգի և պաշտօնեաների միջից էին դրա բազմաթիւ հետևողները: Որոշուեց ստացուածների գրաւում և իրաւադրութիւն քաղաքական պաշտօն ստա-

նալու: Բաւական թւով յարգուած պաշտօնեաներ ինքնապանութիւն գործեցին: Հին կրօնի կենտրոնը Աթէնքն էր, և ներկայացուցիչները նոր պղատնեան փիլիսոփայութեան ուսուցիչներն էին: Յուստինիանը, որի համար ամենից առաջ կարևոր էին հետհաւատ հաստատութիւնների հարուստ կալուածները, 529 թ. յարքունիս գրաւեց պղատնեան աւկաղնիսի հիմնարկութեան կարողութիւնը, և այնտեղի համալսարանում արգելեց փիլիսոփայութեան և իրաւագիտութեան ուսումը: Վերջին եօթ ուսուցիչները գաղթեցին Պարսկաստան: Հեթանոտական հոգևորականութիւնը Փոքր-Ասիայում դեռ բազմաթիւ կողմնակիցներ ունէր, մանաւանդ զիւղական ժողովրդի մէջ: Յովհաննէս Նիկեացին, Ասորի պատմաբանը, որը ինքն իրան անուանում է հեթանոսների առաջնորդ և կուռքերի կործանող, և միանգամայն գրաւած էր Յուստինիանի վստահութիւնը, յետագայ տանաւմեակներում մեծ շափով աշխատել է նոցա հաւատափոխութեան համար: Սա հպարտանում է թէ 70,000 մարդ է մկրտել:

Անհամեմատ ուրախալի պատկեր է ներկայացնում եկեղեցու զարգացումը արտաքին կողմից: Յուստինիանը իւր կրօնական-քաղաքական կառավարչական ծրագրի զլխաւ որ նպատակն էր համարում, ինչպէս որ պետութեան մէջ հաստատեց հաւատի միութիւն, նմանապէս հեթանոսների մէջ տարածել քրիստոնէական կրօնը: Սա նոյն իսկ իւր քաղաքական կապերը այդ նպատակին էր ծառայեցնում, և իւր հաւատոյ առաքեալների համար ձեռք բերում հարեան զօրեղ իշխանների հովանաւորութիւնը: Ուստի Յուստինիանի, ինչպէս նաև նրա անմիջական նախորդների ժամանակը, ներկայանում է միսոնարական գործունէութեան ամենածաղկեալ զարգացման միջոց:

Քրիստոնէական քարոզչութիւնը միաժամանակ յաջող ընթացք ունէր Հելլուրների մէջ՝ Սինգիդունումի շրջակայքում, որ Սև ծովի հիւսիսում ապրող Հոնական ցեղ էր, և Նովկասեան ազգերի մէջ: Սոցա թագաւորները մկրտուելու համար գալիս էին մայրաքաղաք, սոցա ընդունած կրօնին հետևում

* Տես Արարատ 1897 թ. եր. 413: